



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

9 հունիսի 2017 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1/1
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 1-ԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 1-ԻՆ ՆԻՍՏԻ

2017 թվականի հունիսի 9-ին, ժամը 11.00-ին, Երևանի ավագանու նստավայրում՝ Երևանի քաղաքապետարանի շենքում (Արգիշտիի 1) հասցեում, տեղի ունեցավ Երևանի նորընտիր ավագանու առաջին նիստը, որին մասնակցում էր Երևանի ավագանու 60 անդամ, հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս. Մակարյանը:

Երևան քաղաքի նորընտիր ավագանու առաջին նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալները, քաղաքապետի գլխավոր խորհրդականը, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, աշխատակազմի քարտուղարի տեղակալները, քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական, կազմակերպական, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունների պետերն ու վարչական շրջանների ղեկավարները:

Նիստին ներկա էին ՀՀ ՋԼՄ-ի ներկայացուցիչներ:

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի՝ նիստը վարում էր նիստին ներկա տարիքով ավագ անդամ Աստղիկ Գևորգյանը:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 21-ի հ.272-Ա որոշումը՝ Աստղիկ Գևորգյանը հայտարարեց, որ Երևանի ավագանին ընտրվել է և մանդատները բախշվել են՝

- 1) Հայաստանի Հանրապետական կուսակցություն՝ 46 մանդատ,
- 2) «ԵԼՔ» կուսակցությունների դաշինք՝ 14 մանդատ,
- 3) «Երկիր Ծիրանի» կուսակցություն՝ 5 մանդատ:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 1-ի «Երևանի ավագանու ընտրված անդամներ գրանցելու մասին» N1 արձանագրության համաձայն՝ Ա. Գևորգյանը ներկայացրեց ավագանու անդամներին՝ կարդալով յուրաքանչյուրի անունը, ազգանունը, կուսակցության անվանումը.

Հայաստանի Հանրապետական կուսակցության ընտրական ցուցակից՝

1. Տարոն Մարգարյան
2. Մմբատ Լպուտյան
3. Հովիկ Մուսայեյան
4. Աստղիկ Գևորգյան
5. Արա Երնջակյան
6. Մարտին Վարդազարյան
7. Լևոն Իգիթյան
8. Աննա Ասատրյան
9. Երվանդ Երզնկյան
10. Ենթ Ազարյան
11. Նաիրա Նահապետյան
12. Կամո Հովհաննիսյան
13. Գրիգոր Մինասյան
14. Հովհաննես Թոքմաջյան
15. Ռոզա Սիրունյան
16. Միքայել Դովլաթյան
17. Կամո Արեյան
18. Նատալյա Լափաուրի
19. Լիլիթ Բեգլարյան
20. Սերգեյ Մկրտչյան
21. Արա Կետիկյան
22. Աննա Մկրտչյան
23. Ալինա Քուշկյան
24. Անուշ Հայրյան
25. Սանասար Բեգլարյան
26. Արմեն Երեմյան
27. Սերգեյ Ասատրյան
28. Մամվել Գևորգյան
29. Արարատ Գևորգյան
30. Սուրեն Ներսիսյան
31. Արթուր Պետրոսյան
32. Էդմոնդ Կիրակոսյան
33. Հակոբ Խաչատրյան
34. Հովհաննես Մկրտչյան
35. Արսեն Փոլադյան
36. Մումբատ Մումբատյան
37. Արտակ Գասպարյան
38. Խաչատուր Ռաֆայելյան
39. Վասպուրակ Մարտիրոսյան
40. Հովհաննես Ավանեսյան
41. Էդգար Ավետիսյան
42. Գարիկ Մուքիասյան
43. Մանվել Ավետիսյան

44. Արմեն Սահակյան
45. Գոռ Վարդանյան
46. Հասմիկ Սարգսյան

«ԵԼՔ» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից՝

1. Արայիկ Հարությունյան
2. Դավիթ Խաժակյան
3. Անահիտ Բախշյան
4. Աշոտ Աթյան
5. Ալեն Սիմոնյան
6. Անի Խաչատրյան
7. Անի Սամսոնյան
8. Տիգրան Ավինյան
9. Սերգեյ Ղահրամանյան
10. Թեհմինա Վարդանյան
11. Էդուարդ Աղաջանյան
12. Հարություն Բաբայան
13. Տիգրան Տեր-Սարգսյան
14. Ջարուհի Բաթոյան

«Երկիր Ծիրանի» կուսակցության ընտրական ցուցակից՝

1. Ջարուհի Փոստանջյան
2. Մնացական Պարակչիեվ
3. Սոննա Աղեկյան
4. Հայկ Պետրոսյան
5. Մարինա Խաչատրյան

Նիստը վարող Ա. Գևորգյանը հանդես եկավ հայտարարությամբ, այն մասին, որ Երևանի ավագանու 2017 թվականի մայիսի 14-ի ընտրությունների արդյունքով Հայաստանի Հանրապետական կուսակցությունն ստացել է ավագանու անդամների տեղերի 50 տոկոսից ավելին և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետական կուսակցության թեկնածուների ցուցակի առաջին հորիզոնականում գտնվող Տարոն Անդրանիկի Մարգարյանն օրենքի ուժով համարվում է Երևանի ընտրված քաղաքապետ:

Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը հրավիրվեց շարունակելու ավագանու նիստը:

Տ. Մարգարյանը հանդես եկավ ողջույնի ելույթով:

Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը նիստի մասնակիցներին ներկայացրեց Երևանի նորընտիր ավագանու խմբակցությունների անվանումները, խմբակցությունների ղեկավարների և խմբակցությունների քարտուղարների անուն, ազգանունները:

1. «Հանրապետական կուսակցություն» խմբակցություն - ղեկավար Մերգեյ Մկրտչյան, քարտուղար – Սուրեն Ներսիսյան
2. «ԵԼՔ» խմբակցություն – ղեկավար Դավիթ Խաժակյան, քարտուղար – Թեհմինա Վարդանյան
3. «Երկիր Ծիրանի» խմբակցություն – ղեկավար Զարուհի Փոստանջյան, քարտուղար – Մնացական Պարակչիեվ

Երևանի քաղաքապետ Ս. Մարգարյանը ներկայացրեց Երևանի ավագանու ս.թ. հունիսի 9-ի նիստի օրակարգը, որը համաձայն Երևանի ավագանու կանոնակարգի 102-րդ կետի՝ ընդգրկում է հետևյալ հարցերը.

1. Ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի ձևավորում:
2. Քաղաքապետի երդման արարողության հետ կապված կազմակերպչական հարցեր:
3. Հանձնաժողովների կազմավորում:
4. Հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների առաջադրում:
5. Ավագանու հերթական նիստի գումարման օրվա սահմանում:

1. ԼՄԵՑԻՆ - Ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի ձևավորման մասին:

Երևանի քաղաքապետ Ս. Մարգարյանը հայտնեց, որ ղեկավարվելով Երևանի ավագանու կանոնակարգի 96-րդ կետով, Երևանի ավագանու առաջին նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովը ձևավորելու նպատակով խմբակցությունները ներկայացրել են առաջարկություններ՝ հաշվիչ հանձնաժողովի կազմում ավագանու հետևյալ անդամների թեկնածություններն առաջադրելու համար.

- «Հանրապետական կուսակցություն» խմբակցություն՝ Սուրեն Ներսիսյան,
- «ԵԼՔ» խմբակցություն՝ Անի Խաչատրյան,
- «Երկիր Ծիրանի» խմբակցություն՝ Մարինա Խաչատրյան

ԳՐԱՆՅՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 60 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ - 60

դեմ – 0

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Երևանի ավագանու առաջին նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը.

1. Սուրեն Ներսիսյան - «Հանրապետական կուսակցություն» խմբակցություն
2. Անի Խաչատրյան - «ԵԼՔ» խմբակցություն
3. Մարինա Խաչատրյան - «Երկիր Ծիրանի» խմբակցություն

Հաշվի առնելով, որ «Երկիր Ծիրանի» խմբակցության կողմից առաջադրված Մարինա Խաչատրյանը չի ներկայացել նիստին, ղեկավարվելով Երևանի ավագանու կանոնակարգի 100-րդ կետով, Երևանի քաղաքապետ Ս. Մարգարյանը առաջարկեց խմբակցությունների ղեկավարներին ներկայացնել ևս մեկական թեկնածուներ, որոնք գործում են մինչև ավագանու այդ նիստի ավարտը:

«Հանրապետական կուսակցություն» խմբակցության կողմից առաջադրվեց Արմեն Երեմյանի, «ԵԼՔ» խմբակցության կողմից՝ Թեհմինա Վարդանյանի թեկնածությունները:

Ներկայացված առաջարկություններն ընդունվեցին ի գիտություն:

2. ԼՄԵՑԻՆ - Քաղաքապետի երդման արարողության հետ կապված կազմակերպչական հարցեր:

Հարցը ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս. Մակարյանը:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս. Մակարյանը հայտարարեց, որ, համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի, Երևանի քաղաքապետն իր լիազորություններն ստանձնում է իր ընտրվելուց հետո՝ երրորդ օրացուցային օրը, ավագանու՝ օրենքի ուժով հրավիրված նիստում Երևանի բնակիչներին տրված երդմամբ:

Հիմք ընդունելով օրենքի նշված դրույթը, Երևանի քաղաքապետ Տարոն Անդրանիկի Մարգարյանի երդման արարողությունը տեղի է ունենալու 2017 թվականի հունիսի 12-ին, ժամը 11.00-ին հրավիրված ավագանու նիստում:

Ներկայացված տեղեկատվությունը Երևանի ավագանու անդամների կողմից ընդունվեց ի գիտություն:

Երևանի քաղաքապետ Ս. Մարգարյանը ներկայացրեց օրակարգի նախագծի 3-րդ հարցը:

3. ԼՄԵՑԻՆ - Հանձնաժողովների կազմավորման մասին:

Ս. Մարգարյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի և Երևանի ավագանու կանոնակարգի համաձայն գործում է 4 հանձնաժողով:

- 1) Ֆինանսավարկային և տնտեսական հարցերի հանձնաժողով,
- 2) Մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի հանձնաժողով,
- 3) Քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողով,
- 4) Իրավական հարցերի հանձնաժողով:

Ներկայացված տեղեկատվությունը Երևանի ավագանու անդամների կողմից ընդունվեց ի գիտություն:

4. ԼՄԵՑԻՆ - Հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների առաջադրման մասին:

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի՝ մշտական հանձնաժողովի նախագահի առաջին պաշտոնի ընտրության համար թեկնածու առաջադրելու իրավունքն ստանում է Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցությունը:

1. Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության ղեկավար Սերգեյ Մկրտչյանը ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար ներկայացրեց Նաիրա Նահապետյանի թեկնածությունը:

ՈՐՈՇՎԵՑ - Երևան քաղաքի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրել Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Նաիրա Նահապետյանին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 60 անդամ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ -47
դեմ – 0
ձեռնպահ – 13

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

2. Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության ղեկավար Սերգեյ Մկրտչյանը իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար ներկայացրեց Ենոք Ազարյանի թեկնածությունը:

ՈՐՈՇՎԵՑ - Երևան քաղաքի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրել «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Ենոք Ազարյանին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 60 անդամ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ -47
դեմ – 0
ձեռնպահ – 13

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

3. Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության ղեկավար Սերգեյ Մկրտչյանը քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար խմբակցության կողմից ներկայացրեց Հովհաննես Թոքմաջյանի թեկնածությունը:

ՈՐՈՇՎԵՑ - Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրել «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Հովհաննես Թոքմաջյանին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **60** անդամ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ - **47**
դեմ – **0**
ձեռնպահ – **13**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

4. Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյանը մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար ներկայացրեց Արայիկ Հարությունյանի թեկնածությունը:

ՈՐՈՇՎԵՑ - Երևան քաղաքի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրել «ԵԼՔ» խմբակցության անդամ Արայիկ Հարությունյանին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **60** անդամ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ - **17**
դեմ – **0**
ձեռնպահ – **43**

Որոշումն ընդունվել է

5. Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության ղեկավար Սերգեյ Մկրտչյանը ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնի համար ներկայացրեց Արմեն Երեմյանի թեկնածությունը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրել Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Արմեն Երեմյանին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **60** անդամ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ - **47**
դեմ – **0**
ձեռնպահ – **13**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

6. Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության ղեկավար Սերգեյ Մկրտչյանը իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնում առաջադրեց Գրիգոր Մինասյանի թեկնածությունը:

ՈՐՈՇՎԵՑ - Երևան քաղաքի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրել Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Գրիգոր Մինասյանին:

ԳՐԱՆՅՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **60** անդամ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ -**47**
դեմ – **0**
ձեռնպահ – **13**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

7. Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյանը քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի տեղակալի պաշտոնի համար ներկայացրեց Անի Սամսոնյանի թեկնածությունը:

ՈՐՈՇՎԵՑ - Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրել «ԵԼՔ» խմբակցության անդամ Անի Սամսոնյանին:

ԳՐԱՆՅՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **60** անդամ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ -**17**
դեմ – **0**
ձեռնպահ – **43**

Որոշումն ընդունվել է

8. Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության ղեկավար Սերգեյ Սկրոյչանը մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի տեղակալի պաշտոնի համար ներկայացրեց Ռոզա Սիրունյանի թեկնածությունը:

ՈՐՈՇՎԵՑ - Երևան քաղաքի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրել «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Ռոզա Սիրունյանին:

ԳՐԱՆՅՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **60** անդամ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ -**47**
դեմ – **0**
ձեռնպահ – **13**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

Երևանի քաղաքապետ Ս. Մարգարյանը հայտարարեց, որ Երևանի ավագանու մշտական հանձնաժողովների կազմերը կհաստատվեն Երևանի քաղաքապետի կողմից՝ համապատասխան որոշմամբ:

5 հարց - Երևանի քաղաքապետ Ս. Մարգարյանը տեղեկացրեց, որ ավագանու հաջորդ հերթական նիստը կգումարվի օրենքով սահմանված ժամկետում:

Առաջարկն ավագանու անդամների կողմից ընդունվեց ի գիտություն:

Արձանագրեց՝
Ն. Դուկայան